



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ
ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐ
ՀՐԱՄԱՆ

No 72 -Ն

«03» հունիսի 2023 թ.

ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ 3-ՐԴ, 6-ՐԴ, 8-ՐԴ ԵՎ 11-
ՐԴ ԴԱՍԱՐԱՆՆԵՐԻ «ԹՎԱՅԻՆ ԳՐԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՀԱՄԱԿԱՐԳՉԱՅԻՆ
ԳԻՏՈՒԹՅՈՒՆ» ԱՌԱՐԿԱՅԻ ԾՐԱԳՐԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Հանրակրթության մասին» օրենքի 7-րդ հոդվածի 4-րդ մասով և 30-րդ
հոդվածի 1-ին մասի 1-ին կետով՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

1. Հաստատել հանրակրթական ուսումնական հաստատություններում 3-րդ, 6-րդ, 8-րդ և 11-
րդ դասարանների «Թվային գրագիտություն և համակարգչային գիտություն» առարկայի
ծրագրերը՝ համաձայն հավելվածի:
2. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

6/30/2023

ԺԱՆՆԱ ԱՆԴՐԵԱՅԱՆ

ՆԱԽԱՐԱՐ՝

Signed by: ANDREASYAN ZHANNA 6402810169

Ժ. ԱՆԴՐԵԱՅԱՆ



Հավելված

ՀՀ կրթության, գիտության,

մշակույթի և սպորտի նախարարի

2023 թվականի հուլիսի 3-ի

N 72-Ն հրամանի

ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ 3-ՐԴ, 6-ՐԴ, 8-ՐԴ ԵՎ 11-
ՐԴ ԴԱՍԱՐԱՆՆԵՐԻ «ԹՎԱՅԻՆ ԳՐԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՀԱՄԱԿԱՐԳՉԱՅԻՆ
ԳԻՏՈՒԹՅՈՒՆ» ԱՌԱՐԿԱՅԻ ԾՐԱԳՐԵՐ

3-ՐԴ ԴԱՍԱՐԱՆ

Թեմա 3-1	Դասարան 3
Սովորում ենք սարքերով աշխատել	Կող. - (ՀՄԳ. ՀՄՀ. ԱՊ. 1)
Նպատակ/Գիտակարգային առանցքային վերջնարդյունք. 3-րդ մակարդակ	
Ձևավորել էլեկտրական/էլեկտրոնային սարքերը անվտանգ օգտագործելու և շահագործելու կարողություններ:	
Վերջնարդյունքներ	
<p>Թեմայի ուսումնառության արդյունքում սովորողը կկարողանա.</p> <ul style="list-style-type: none"> - Թվարկել և տարբերակել տեխնոլոգիական սարքերի օգտագործմամբ պայմանավորված առողջական վտանգները: - Թվարկել, նկարագրել գործողություններ, որոնք հնարավորություն կտան էլեկտրական սարքերով աշխատանքի ընթացքում խուսափելու առողջությանը հասցվող վնասներից: - Թվարկել էլեկտրական սարքերից անվտանգ օգտվելու կանոնները 	
Բովանդակություն	
<p>Էլեկտրոնային ապահովություն և առողջություն, էլեկտրոնային սարքերով աշխատանք: Համակարգչի միացում, անջատում և վերագործարկում : Անսարքություններ, որոնց դեպքում անհրաժեշտ է օգնության կանչել մեծահասակներին:</p>	
Գործնական աշխատանքներ	Խաչվող հասկացություններ
<ul style="list-style-type: none"> - Հարցեր տալ և խնդիրներ սահմանել: - Ներգրավվել ապացույցից բխող փաստարկման/հիմնավորման գործընթացում: - Տեղեկատվություն ստանալ, գնահատել և հաղորդել: 	Պատճառ և հետևանք
ՀՊԶ Կարողունակություններ	ՀՊԶ Վերջնարդյունքներ
Կ5 Կ3	S14 S31
Միջառարկայական կապեր	

Բոլոր առարկաների ուսումնասիրության ընթացքում անվտանգ կիրառել համակարգիչները, քանի որ դրանք կարևոր են առողջության համար:

Կարողանալ պահպանել անվտանգության կանոնները էլեկտրական սարքավորումներով աշխատելիս:

Նկարագրել քայլեր, որոնք կնվազեցնեն SS սարքերի օգտագործման ժամանակ ապահովության և առողջության հնարավոր վտանգները:

Թեմա 3-2	Դասարան 3
Որտե՞ղ է այն: Տեխնոլոգիան քո տանը, դպրոցում և այլուր:	Կոդ - (ՀՄԳ. ՀՄՀ. ԱՁԴ. 2)
Նպատակ/Գիտակարգային առանցքային վերջնարդյունք. 3-րդ մակարդակ	
Ներկայացնել այն համակարգչային տեխնոլոգիաները, որոնք փոխել են աշխարհը: Մեկնաբանել թե ինչպես են այդ տեխնոլոգիաները ազդել տարբեր բնագավառների վրա:	
Վերջնարդյունքներ	
<p>Թեմայի ուսումնառության արդյունքում սովորողը կկարողանա.</p> <ul style="list-style-type: none"> - Նկարագրել և համեմատել թե ինչպես են մարդիկ ապրել և աշխատել մինչև համակարգչային տեխնոլոգիաների կիրառումը և դրանից հետո: - Տարբերակել և ներկայացնել համակարգչային/ թվային/ այն տեխնոլոգիաները և սարքավորումները, որոնք փոխել են մարդկանց առօրյան: 	
Բովանդակություն	
<p>Որտե՞ղ և ի՞նչ համակարգիչներ/ սարքավորումներ կան</p> <ul style="list-style-type: none"> - Պլանշետներ, հեռախոսներ - Եռաչափ տպիչներ/գրիչներ, անլար ականջակալներ - Էլեկտրոնային գրքեր և դասագրքեր 	
Գործնական աշխատանքներ	Խաչվող հասկացություններ
Տվյալներ վերլուծել և մեկնաբանել Տեղեկություններ ստանալ, գնահատել և հաղորդել Մեկնաբանել նկարը կամ գրել շարադրություն «Տեխնոլոգիան քո կյանքում» թեմայով	Պատճառ և հետևանք Կառուցվածք և գործառույթ Չարգացում

ՀՊԶ Կարողունակություններ	ՀՊԶ Վերջնարդյունքներ
Կ5 Կ7	S14 S11
Միջառարկայական կապեր	
Բոլոր առարկաների ուսումնասիրության ընթացքում մեկնաբանել թե ինչպես են այդ տեխնոլոգիաները ազդել ոլորտի զարգացման վրա:	

Թեմա 3-3	Դասարան 3
Համակարգչով և առանց համակարգչի. տեքստեր, նկարներ, գրաֆիկներ	Կող. - (ՀՄԳ. ԹԳԾ. ՕԳՏ. 1)
Նպատակ/Գիտակարգային առանցքային վերջնարդյունք. 3-րդ մակարդակ	
Ձևավորել հմտություններ՝ ընտրելու և գործարկելու համապատասխան համակարգչային ծրագրեր՝ բազմազան առաջադրանքներ կատարելու համար:	
Վերջնարդյունքներ	
Թեմայի ուսումնառության արդյունքում սովորողը կկարողանա.	
<ul style="list-style-type: none"> - Բացահայտել տեքստային խմբագրման ծրագրերում նոր գործիքներ (օրինակ՝ փաստաթղթերում նկարներ ավելացնել, փոխել տեքստի տառաչափը, գույնը, տառատեսակը, տեքստի գեղարվեստական ձևավորումը): - Ստեղծել և մշակել նկարներ՝ օգտագործելով պարզ գրաֆիկական խմբագրիչներ, պահպանել աշխատանքը: - Տեքստային խմբագրիչի միջավայրում ստեղծել աղյուսակներ, կատարել աղյուսակի տողերի և սյան փոփոխություններ/ աղյուսակում ավելացնել տող, սյուն, ջնջել տողը կամ սյունը/: 	
Բովանդակություն	
<p>Ի՞նչ կարող ենք անել համակարգչով կամ սարքով և առանց դրա:</p> <p>Ուսումնասիրում ենք տեքստը.</p> <ul style="list-style-type: none"> - ավելացնում, հեռացնում, փոխում ենք նկարի չափսերը, տեքստի ոճը, տառաչափը և գույնը, Ուսումնասիրում ենք նկարները. - ծրագրեր նկարներ ստեղծելու համար, - նկարում և պահպանում ենք պարզ նկարներ: <p>Սկսում ենք աշխատանքը աղյուսակների հետ.</p> <ul style="list-style-type: none"> - պարզ աղյուսակներ, աղյուսակում ավելացնել տող, սյուն, ջնջել տողը կամ սյունը - տվյալները ներմուծում ենք աղյուսակի մեջ: 	
Գործնական աշխատանքներ	Խաչվող հասկացություններ
- Հարցեր տալ և խնդիրներ սահմանել:	Պատճառ և հետևանք

- Տվյալներ վերլուծել և մեկնաբանել: - Բացատրություններ ձևակերպել և լուծումներ մշակել:	Կառուցվածք և գործառույթ
ՀՊԶ Կարողունակություններ Կ5	ՀՊԶ Վերջնարդյունքներ S14
Միջառարկայական կապեր	
Մաթեմատիկա <ul style="list-style-type: none"> - Կարողանալ ստեղծել աղյուսակներ, պարզ սանդղակներ կազմել, լրացնել: Արվեստ <ul style="list-style-type: none"> - Կարողանալ թեմային համապատասխան նկարներ նկարել: 	

Թեմա 3-4	Դասարան 3
Աշխատում ենք միասին, կիսվում մեր աշխատանքով և ստանում մյուսներից	Կող. - (ՀՄԳ. ԹԳԾ. ՕՊՏ. 1)
Նպատակ/Գիտակարգային առանցքային վերջնարդյունք. 3-րդ մակարդակ	
Չարգացնել Էլեկտրոնային փոստից օգտվելու կարողություններ:	
Վերջնարդյունքներ	
Թեմայի ուսումնառության արդյունքում սովորողը կկարողանա. <ul style="list-style-type: none"> -Կիրառել Էլեկտրոնային փոստը՝ կցել, ուղարկել և ստանալ կից ֆայլեր: 	
Բովանդակություն	
Ուսումնասիրում ենք Էլեկտրոնային փոստի գործիքները. <ul style="list-style-type: none"> -կցում, ուղարկում, ստանում և բացում ենք ֆայլեր: 	
Գործնական աշխատանքներ	Խաչվող հասկացություններ

<ul style="list-style-type: none"> - Բացատրություններ ձևակերպել և լուծումներ մշակել: - Տեղեկատվություն ստանալ, գնահատել և հաղորդել: 	<p>Մասշտաբ, համամասնություն և քանակ Անհատ և հարաբերություններ Կառուցվածք և գործառույթ</p>
<p>ՀՊԶ Կարողունակություններ</p> <p>Կ7</p>	<p>ՀՊԶ Վերջնարդյունքներ</p> <p>S9</p>
<p align="center">Միջառարկայական կապեր</p> <p>Բոլոր առարկաների ուսումնասիրության ընթացքում ուսումնական կյանքի փոխանակման նպատակով ուղարկել և ստանալ էլեկտրոնային նամակներ՝ կցելով ֆայլեր:</p> <p>Հայոց լեզու</p> <ul style="list-style-type: none"> - Գրել գրագետ նամակներ, ճիշտ ձևակերպել նամակի վերանագիրը, բովանդակությունը: 	

<p align="center">Թեմա 3-5</p>	<p align="center">Դասարան 3</p>
<p>Համակարգչի էլքային և մուտքային սարքերը</p>	<p>Կողմ - (ՀՄԳ. ՄՐՔ. ԱՇԽ. 1)</p>
<p align="center">Նպատակ/Գիտակարգային առանցքային վերջնարդյունք. 3-րդ մակարդակ</p>	
<p>Ձևավորել համակարգչի մուտքային և էլքային սարքերը տարբերակելու, թվարկելու, ինչպես նաև խմբավորելու հմտություններ:</p>	
<p align="center">Վերջնարդյունքներ</p>	
<p>Թեմայի ուսումնառության արդյունքում սովորողը կկարողանա.</p> <ul style="list-style-type: none"> - ճանաչել և մատնանշել համակարգչի մուտքային և էլքային սարքերը: - Համեմատել տարատեսակ մուտքային և էլքային սարքերը: 	
<p align="center">Բովանդակություն</p>	
<p>Ճանաչել, թվարկել և մատնանշել մուտքային և էլքային սարքերը:</p>	
<p align="center">Գործնական աշխատանքներ</p>	<p align="center">Խաչվող հասկացություններ</p>
<p>- Մոդելներ մշակել և օգտագործել:</p>	<p>Կառուցվածք և գործառույթ</p>

- Բացատրություններ ձևակերպել և լուծումներ մշակել:	Ձարգացում Կայունություն և փոփոխություն
ՀՊՉ Կարողունակություններ Կ4 Կ1	ՀՊՉ Վերջնարդյունքներ S1 - S2 -
Միջառարկայական կապեր	
Բոլոր առարկաների ուսումնասիրության ընթացքում կիրառել մուտքային և ելքային սարքերը՝ ինֆորմացիայի մուտքագրման, արտածման համար:	

Թեմա 3-6	Դասարան 3
Ստեղնաշարի կարևոր կոճակներ ավելի արագ աշխատելու համար:	Կոդ - (ՀՄԳ. ՄՐՔ. ԱՇԽ. 2)
Նպատակ/Գիտակարգային առանցքային վերջնարդյունք. 3-րդ մակարդակ	
Ձևավորել ստեղնաշարային բանալիների միջոցով սիշքերի հետ գործողություններ կատարելու հմտություններ:	
Վերջնարդյունքներ	
Թեմայի ուսումնասիրության արդյունքում սովորողը կկարողանա. <ul style="list-style-type: none"> - Կատարել պարզ գործողություններ սիշքերի հետ ստեղնաշարային բանալիների միջոցով՝ պատճենել-տեղադրել, տեղափոխել, ջնջել: - Նկարագրել ստեղնաշարային բանալիների օգտագործման առավելությունները: 	
Բովանդակություն	
Արագ աշխատելու գաղտնիքները: Ստեղնաշարային բանալիներ. - ctrl+c / ctrl+v - ctrl+x / ctrl+v - del	
Գործնական աշխատանքներ	Խաչվող հասկացություններ

<p>- Տեղեկատվություն ստանալ, գնահատել և հաղորդել:</p>	<p>Պատճառ և հետևանք Կառուցվածք և գործառույթ Օրինաչափություն</p>
<p>ՀՊՉ Կարողունակություններ Կ5</p>	<p>ՀՊՉ Վերջնարդյունքներ S14</p>
<p align="center">Միջառարկայական կապեր</p> <p>Բոլոր առարկաների ուսումնասիրության ընթացքում կիրառել ստեղծարարային բանալիները՝ աշխատանքը ավելի արդյունավետ և արագ կազմակերպելու համար:</p>	

<p align="center">Թեմա 3-7</p>	<p align="center">Դասարան 3</p>
<p>Հավաքում ենք տվյալներ</p>	<p>Կող. - (ՀՄԳ. ԱՄՏԾ. ՌԵՊ. 2)</p>
<p align="center">Նպատակ/Գիտակարգային առանցքային վերջնարդյունք. 3-րդ մակարդակ</p>	
<p>Ձևավորել տվյալները հավաքագրելու և այն տարբեր տեսողական եղանակներով ներկայացնելու կարողություններ:</p>	
<p align="center">Վերջնարդյունքներ</p>	
<p>Թեմայի ուսումնասիրության արդյունքում սովորողը կկարողանա.</p> <ul style="list-style-type: none"> - Համակարգչով կամ առանց դրա մեզ շրջապատող աշխարհի վերաբերյալ պարզ տվյալներ հավաքել: - Նկարագրել համակարգչով կամ թղթով տվյալներ հավաքելու տարբերությունները: 	
<p align="center">Բովանդակություն</p>	

Հավաքում ենք տվյալներ՝ օգտագործելով ծրագրեր.

- տեքստային փաստաթուղթ,
- էլեկտրոնային աղյուսակներ:

Գործնական աշխատանքներ	Խաչվող հասկացություններ
<ul style="list-style-type: none">- Հետազոտություններ պլանավորել և իրականացնել:- Տվյալներ վերլուծել և մեկնաբանել:	Օրինաչափություն Մասշտաբ, համամասնություն և քանակ
ՀՊՀ Կարողունակություններ Կ7 Կ1	ՀՊՀ Վերջնարդյունքներ S3 S15
<p style="text-align: center;">Միջառարկայական կապեր</p> <p>Բոլոր առարկաների ուսումնասիրության ընթացքում հավաքագրել տվյալներ տեքստային փաստաթղթի կամ էլեկտրոնային աղյուսակի օգնությամբ:</p>	

Թեմա 3-8	Դասարան 3
Բլոկների վրա հիմնված ծրագրավորման լեզվի հիմունքներ	Կոդ - (ՋՄԳ4. ԱՄՏԾ. ՄՍՄ. 1)
Նպատակ/Գիտակարգային առանցքային վերջնարդյունք. 3-րդ մակարդակ	
<ul style="list-style-type: none"> - Ձևավորել բլոկների վրա հիմնված ծրագրավորման լեզվի հիմնական գործիքներով աշխատելու հմտություններ: 	
Վերջնարդյունքներ	
<p>Թեմայի ուսումնառության արդյունքում սովորողը կկարողանա</p> <ul style="list-style-type: none"> - Բացել/ թողարկել ծրագրի միջավայրը - Նկարագրել միջերեսը - Կիրառել հիմնական գործիքները (կերպարների ստեղծում, չափի, դիրքի սահմանում ստանդարտ գործիքների կիրառմամբ և այլն) 	
Բովանդակություն	
<p>Բացում ենք/ թողարկում ենք ծրագրի միջավայրը, նկարագրում ենք ծրագրի միջերեսը:</p> <p>Ստեղծում ենք կերպարներ, կատարում չափի, դիրքի սահմանում՝ ստանդարտ գործիքների կիրառմամբ:</p>	
Գործնական աշխատանքներ	Խաչվող հասկացություններ
<ul style="list-style-type: none"> - Չարցեր տալ և խնդիրներ սահմանել: - Չետագոտություններ պլանավորել և իրականացնել: - Տվյալներ վերլուծել և մեկնաբանել: 	<p>Օրինաչափություններ</p> <p>Չամակարգ և մոդել</p> <p>Մասշտաբ, համամասնություն և քանակ</p>
<p>ՀՊՉ Կարողունակություններ</p> <p>Կ7</p> <p>Կ2</p>	<p>ՀՊՉ Վերջնարդյունքներ</p> <p>S 8</p> <p>S 9</p>
<p style="text-align: center;">Միջառարկայական կապեր</p> <p>Մաթեմատիկա</p> <ul style="list-style-type: none"> - Աշխատել չափերի հետ: <p>Արվեստ</p> <ul style="list-style-type: none"> - Կարողանալ թեմային համապատասխան նկարներ նկարել: 	

Թեմա 3-11	Դասարան 3
Ինչպես են գործում խաղերի միավորները (փոփոխականներ)	Կող - (ՀՄԳ. ԱՄՏԾ. ՌԵՊ. 4)
Նպատակ/Գիտակարգային առանցքային վերջնարդյունք. 3-րդ մակարդակ	
Ձևավորել փոփոխականների օգտագործելու, դրանցում տվյալներ պահելու և փոփոխելու հմտություններ:	
Վերջնարդյունքներ	
<p>Թեմայի ուսումնառության արդյունքում սովորողը կկարողանա.</p> <ul style="list-style-type: none"> - ճանաչել փոփոխականներ և որոշել դրանց նախնական արժեքները: - Նկարագրել իրավիճակներ, որոնք պահանջում են օգտագործել այդ փոփոխականները: - Փոփոխականներին տալ արժեքներ: 	
Բովանդակություն	
<p>Ի՞նչ է փոփոխականը: Որո՞նք են փոփոխականների օգտագործելու առավելությունները:</p>	
Գործնական աշխատանքներ	Խաչվող հասկացություններ
<ul style="list-style-type: none"> - Մոդելներ մշակել և օգտագործել: - Տվյալներ վերլուծել և մեկնաբանել: - Կիրառել մաթեմատիկական և հաշվողական մտածողություն: 	<p>Համակարգ և մոդել Օրինաչափություններ Մասշտաբ, համամասնություն, քանակ</p>
<p>ՀՊԶ Կարողունակություններ</p> <p>Կ7</p>	<p>S12</p> <p>S14</p>
<p>Միջառարկայական կապեր</p> <p>Մաթեմատիկա</p> <ul style="list-style-type: none"> - Կիրառել մաթեմատիկական և հաշվողական մտածողություն: 	

Թեմա 3-12	Դասարան 3
------------------	------------------

Պատկերների համակարգչի միջոցով	Կող. - (ՀՄԳ. ԱՄՏԾ. ԾՐԳ. 1)
Նպատակ/Գիտակարգային առանցքային վերջնարդյունք. 3-րդ մակարդակ	
Ձևավորել հմտություններ՝ որևէ գործողություն կամ առաջադրանք ավարտին հասցնելու նպատակով ստեղծելու/ հետևելու ավգորիթմերին՝ բացահայտելով կրկնությունները:	
Վերջնարդյունքներ	
<p>Թեմայի ուսումնառության արդյունքում սովորողը կկարողանա.</p> <ul style="list-style-type: none"> - Ներկայացնել շարժումները ,որպես հրամանների շարքեր: - Պլանավորել ավգորիթմ, քայլերի հաջորդականություն, որում առկա են կրկնություններ և որով հնարավոր է նկարել պարզ ուրվագիծ կամ պատկեր: - Իրականացնել այդ ավգորիթմները բլոկների վրա հիմնված ծրագրավորման լեզվով: 	
Բովանդակություն	
<p>Ինչպես տրոհել պատկերները քայլաշարերի:</p> <p>Ինչպես մոդելավորել շարժվելու ուղղությունները քայլ առ քայլ:</p>	
Գործնական աշխատանքներ	Խաչվող հասկացություններ
<ul style="list-style-type: none"> - Մոդելներ մշակել և օգտագործել: - Բացատրություններ ձևակերպել և լուծումներ մշակել: 	<p>Պատճառ և հետևանք</p> <p>Կառուցվածք և գործառույթ</p>
<p>ՀՊԶ Կարողունակություններ</p> <p>Կ7</p>	<p>ՀՊԶ Վերջնարդյունքներ</p> <p>S5</p> <p>S9</p>
Միջառարկայական կապեր	
<p>Մաթեմատիկա</p> <ul style="list-style-type: none"> - Կիրառել մաթեմատիկական և հաշվողական մտածողություն: 	

Թեմա 3-13	Դասարան 3
Կրկնվող գործողություններ	Կող. - (ՀՄԳ. ԱՄՏԾ. ԾՐԳ. 2)
Նպատակ/Գիտակարգային առանցքային վերջնարդյունք. 3-րդ մակարդակ	

Ձևավորել կրկնվող գործողություններ/ քայլեր ներկայացնելու և իրականացնելու հմտություններ:

Վերջնարդյունքներ

Թեմայի ուսումնառության արդյունքում սովորողը կկարողանա.

- Հաշվել, թե քանի անգամ պետք է որոշակի գործողություն կրկնել, և ներկայացնել ցիկի գաղափարը:
- Ձևակերպել և ներկայացնել ալգորիթմներ/ քայլերի հաջորդականություն/ որևէ նպատակի հասնելու համար :
- Նկարագրել ցիկլեր օգտագործելու առավելությունները մեխանիկական կրկնության նկատմամբ:
- Տարբերակել այն հրամանները, որոնք պետք է կրկնվեն ցիկլերով:

Բովանդակություն

Ինչպե՞ս պարզեցնել ծրագիրը՝ օգտագործելով ցիկլեր

- կրկնել վերջավոր թվով անգամներ,
- կրկնել անվերջ:

Ինչպե՞ս նկարել ուրվապատկերներ՝ օգտագործելով ցիկլեր.

Գործնական աշխատանքներ

Խաչվող հասկացություններ

- Մոդելներ մշակել և օգտագործել:
- Բացատրություններ ձևակերպել և լուծումներ մշակել:
- Ներգրավվել ապացույցից բխող փաստարկման/հիմնավորման գործընթացում:

Օրինաչափություն
Էներգիա, նյութ,
Անհատական և մշակութային
արժեհամակարգ

ՀՊՉ Կարողունակություններ

ՀՊՉ Վերջնարդյունքներ

Կ2

S 8

Կ7

S9
S10

Միջառարկայական կապեր

Մաթեմատիկա

- Կիրառել մաթեմատիկական և հաշվողական մտածողություն:

Թեմա 6-1	Դասարան 6
Տեղեկատվական տեխնոլոգիաները և հասարակությունը	Կողմ - (ՀՄԳԳ. ՀՄՀ. ԱՊ. 1)
Նպատակ/Գիտակարգային առանցքային վերջնարդյունք. 3-րդ մակարդակ	
Ձևավորել մարդու կյանքում և հասարակության մեջ տեղեկատվական տեխնոլոգիաների դերի և նշանակության վերաբերյալ գիտելիքներ:	
Վերջնարդյունքներ	
<p>Թեմայի ուսումնառության արդյունքում սովորողը կկարողանա.</p> <ul style="list-style-type: none"> - Նկարագրել համագործակցությանը, ուսումնառության արդյունավետությանը, մարդկանց գործունեության տարբեր ոլորտները օժանդակող տեխնոլոգիաների օգտագործման դրական ազդեցությունը: 	
Բովանդակություն	
Տեղեկատվական տեխնոլոգիաները և հասարակությունը: Տեխնոլոգիայի զարգացման փուլերը, դրանց դրական ազդեցությունը քաղաքակրթության վրա:	
Գործնական աշխատանքներ	Խաչվող հասկացություններ
<ul style="list-style-type: none"> - Հարցեր տալ և խնդիրներ սահմանել: - Ներգրավվել ապացույցից բխող փաստարկման/հիմնավորման գործընթացում: - Տեղեկատվություն ստանալ, գնահատել և հաղորդել: 	<p>Անհատ և հարաբերություններ</p> <p>Ձարգացում</p> <p>Համաշխարհայնացում</p>
<p>ՀՊԶ Կարողունակություններ</p> <p>Կ8 Կ3</p>	<p>ՀՊԶ Վերջնարդյունքներ</p> <p>Հ13</p>
Միջառարկայական կապեր	
Բոլոր առարկաների ուսումնասիրության ընթացքում ներկայացնել մարդկանց գործունեության տարբեր ոլորտները օժանդակող տեխնոլոգիաների օգտագործման դրական ազդեցությունը:	

Թեմա 6-2	Դասարան 6
-----------------	------------------

Անձնական տվյալների պաշտպանություն	Կողմ - (ՀՄԳԳ. ՀՄՀ. ԱՊ. 3)
Նպատակ/Գիտակարգային առանցքային վերջնարդյունք. 3-րդ մակարդակ	
Ձևավորել անձնական տեղեկատվությունը պաշտպանելու և իրական աշխարհում առկա կիրառելի արդարություններից պաշտպանվելու հմտություններ:	
Վերջնարդյունքներ	
<p>Թեմայի ուսումնասիրության արդյունքում սովորողը կկարողանա.</p> <ul style="list-style-type: none"> - Բացատրել, թե ինչ ազդեցություն կարող է ունենալ անձնական կամ գաղտնի տեղեկատվության արտահոսքն իրական կյանքում: - Իրականացնել հաշվողական սարքերի ու հաշիվների համար անձնական տվյալների պաշտպանություն: 	
Բովանդակություն	
<ul style="list-style-type: none"> - Անձնական տվյալների պաշտպանություն: - Հաքերության ենթարկված համակարգիչներ/սարքեր: - Տվյալների գողություն: - Գաղտնաբառեր: 	
Գործնական աշխատանքներ	Խաչվող հասկացություններ
<ul style="list-style-type: none"> - Հարցեր տալ և խնդիրներ սահմանել: -Ներգրավվել ապացույցից բխող փաստարկման/հիմնավորման գործընթացում: 	<p>Պատճառ և հետևանք, Անհատ և հարաբերություններ</p>
<p>ՀՊԶ Կարողունակություններ</p> <p>Կ8 Կ3 Կ2</p>	<p>ՀՊԶ Վերջնարդյունքներ</p> <p>Հ13 Հ46</p>
Միջառարկայական կապեր	
Բոլոր առարկաների ուսումնասիրության ընթացքում պաշտպանել անձնական տեղեկատվությունը՝ պահել գաղտնի և այն չտարածել, իրականացնել հաշվողական սարքերի ու հաշիվների համար անձնական տվյալների պաշտպանություն:	

Թեմա 6-3	Դասարան 6
-----------------	------------------

Յեղիևակներ և օգտագործողներ, ով ինչ իրավունք ունի:	Կողմ - (ՀՄԳԿ. ՀՄՀ. ԻՐԿ. 1)
Նպատակ/Գիտակարգային առանցքային վերջնարդյունք. 3-րդ մակարդակ	
Ձևավորել հեղինակային իրավունքի գաղափարի վերաբերյալ պատկերացում և գիտելիքներ:	
Վերջնարդյունքներ	
<p>Թեմայի ուսումնասիրության արդյունքում սովորողը կկարողանա.</p> <ul style="list-style-type: none"> - Բացատրել հեղինակային իրավունքի գաղափարը համակարգչային ծրագրերի և մեդիայի ոլորտում: 	
Բովանդակություն	
<p>Յեղիևակային իրավունք: Յեղիևակային իրավունքը բարձր տեխնոլոգիաներում: Յեղիևակային իրավունքը մեդիայի ոլորտում:</p>	
Գործնական աշխատանքներ	Խաչվող հասկացություններ
<ul style="list-style-type: none"> - Հարցեր տալ և խնդիրներ սահմանել: - Ներգրավվել ապացույցից բխող փաստարկման/հիմնավորման գործընթացում: - Տեղեկատվություն ստանալ, գնահատել և հաղորդել: 	Անհատ և հարաբերություններ
<p>ՀՊԶ Կարողունակություններ</p> <p>Կ5 Կ2</p>	<p>ՀՊԶ Վերջնարդյունքներ</p> <p>Հ14 Հ28 Հ30</p>
Միջառարկայական կապեր	
Բոլոր առարկաների ուսումնասիրության ընթացքում ստեղծված ուսումնական նյութերում տալ հղում՝ հեղինակների կողմից կիրառվող ինֆորմացիային:	

Թեմա 6-4	Դասարան 6
-----------------	------------------

Ավելի մեծ հնարավորություններ, ավելի հետաքրքիր աշխատանք	Կոդ - (ՀՄԳԳ. ԹԳԾ. ՕԳՏ. 1)
Նպատակ/Գիտակարգային առանցքային վերջնարդյունք. 3-րդ մակարդակ	
Ձարգացնել հաշվողական աշխատանքներ ստեղծելու և բարելավելու նպատակով բազմակողմանի հմտություններ:	
Վերջնարդյունքներ	
<p>Թեմայի ուսումնառության արդյունքում սովորողը կկարողանա.</p> <ul style="list-style-type: none"> - Աշխատել պատկերի հետ. օգտագործել տարբեր չափսերի վրձիններ, ձևապատկերներ և այլ գործիքներ, սիմետրիայի գործիքն օգտագործելով՝ ստեղծել նկարներ (արտապատկերել ուղղահայաց կամ հորիզոնական առանցքի շուրջ, շրջել): - Ընտրել նկարի համապատասխան հատվածները, պատճենել դրանք և փոխել չափսերը: 	
Բովանդակություն	
<p>Նոր թվային գործիքներ:</p> <p>Հմտանում ենք պատկերներ ստեղծելու գործում.</p> <ul style="list-style-type: none"> - վրձիններ, - ձևապատկերներ, - սիմետրիկ փոփոխություններ, - ընտրել, պատճենել, փոխել չափսերը: 	
Գործնական աշխատանքներ	Խաչվող հասկացություններ
<ul style="list-style-type: none"> - Տվյալներ վերլուծել և մեկնաբանել: - Բացատրություններ ձևակերպել և լուծումներ մշակել: - Տեղեկատվություն ստանալ, գնահատել և հաղորդել: 	<p>Օրինաչափություն</p> <p>Անհատական և մշակութային արժեհամակարգ</p> <p>Կայունություն և փոփոխություն</p>
<p>ՀՊԶ Կարողունակություններ</p> <p>Կ2</p> <p>Կ5</p> <p>Կ7</p>	<p>ՀՊԶ Վերջնարդյունքներ</p> <p>Հ12 Հ28</p> <p>Հ14 Հ29</p> <p>Հ07 Հ51</p> <p>Հ46 Հ25</p>
Միջառարկայական կապեր	

Բոլոր առարկաների ուսումնասիրության ընթացքում թեմային համապատասխան ստեղծել թվային նկարներ և մշակել դրանք:

Թեմա 6-5	Դասարան 6
Ֆայլեր և դրանց տիպերը	Կոդ - (ՀՄԳԿ. ՍՐՔ. ՑՆՑ. 1)
Նպատակ/Գիտակարգային առանցքային վերջնարդյունք. 3-րդ մակարդակ	
Ձևավորել ֆայլերի տարբեր ձևաչափերը տարբերակելու կարողություններ:	
Վերջնարդյունքներ	
<p>Թեմայի ուսումնասիրության արդյունքում սովորողը կկարողանա.</p> <ul style="list-style-type: none"> - Բացատրել ֆայլի գաղափարը և թվարկել դրա գլխավոր բնորոշ հատկանիշները: - Տարբերակել ֆայլերի տարբեր տեսակները, իմանալ դրանց տարածված ձևաչափերը, բացատրել նշանակությունը: 	
Բովանդակություն	
Ֆայլերը և դրանց հիմնական բնորոշ հատկանիշները: Ֆայլերի ձևաչափեր:	
Գործնական աշխատանքներ	Խաչվող հասկացություններ
<ul style="list-style-type: none"> - Տվյալներ վերլուծել և մեկնաբանել: - Կիրառել մաթեմատիկական և հաշվողական մտածողություն: - Բացատրություններ ձևակերպել և լուծումներ մշակել: 	<p>Օրինաչափություն</p> <p>Կայունություն և փոփոխություն</p> <p>Մասշտաբ, համամասնություն, քանակ</p>
<p>ՀՊԶ Կարողունակություններ</p> <p>Կ7</p> <p>Կ5</p>	<p>ՀՊԶ Վերջնարդյունքներ</p> <p>Հ6</p> <p>Հ12</p>
Միջառարկայական կապեր	

Բոլոր առարկաների ուսումնասիրության ընթացքում կիրառել տարբեր ձևաչափերի ֆայլեր՝ աշխատանքը ավելի արդյունավետ կազմակերպելու համար:

Թեմա 6-6	Դասարան 6
Տարբեր տեսակի ֆայլեր մեկ տեղում	Կող. - (ՀՄԳԳ. ԹԳԾ. ՕՊՏ. 2)
Նպատակ/Գիտակարգային առանցքային վերջնարդյունք. 3-րդ մակարդակ	
Չարգացնել տարբեր ձևաչափի ֆայլեր մեկ հաշվողական աշխատանքում համադրելու հմտություններ և կարողություններ:	
Վերջնարդյունքներ	
<p>Թեմայի ուսումնառության արդյունքում սովորողը կկարողանա.</p> <p>- Ներմուծել/համադրել տարբեր ձևաչափի ֆայլերի պարունակությունը մեկ աշխատանքում (օրինակ՝ նկարների, երաժշտության, տեսանյութի տեղադրում տեքստային ֆայլերում կամ ցուցադրումներում):</p>	
Բովանդակություն	
Տարբեր տեսակի ֆայլեր մեկ աշխատանքում:	
Գործնական աշխատանքներ	Խաչվող հասկացություններ
<p>- Հետազոտություններ պլանավորել և իրականացնել:</p> <p>- Տեղեկատվություն ստանալ, գնահատել և հաղորդել:</p>	<p>Կառուցվածք և գործառույթ Անհատական և մշակութային արժեհամակարգ</p>
<p>ՀՊԶ Կարողունակություններ</p> <p>Կ5 Կ2 Կ3 Կ6</p>	<p>ՀՊԶ Վերջնարդյունքներ</p> <p>Հ14 Հ25 Հ28 Հ34 Հ24 Հ42</p>
Միջառարկայական կապեր	
Բոլոր առարկաների ուսումնասիրության ընթացքում կարողանալ թեմային համապատասխան աշխատանքներ ստեղծել՝ համադրելով տարբեր ձևաչափի ֆայլերի պարունակությունը մեկ աշխատանքում:	

Թեմա 6-7	Դասարան 6
Հաշվողական համակարգեր	Կող. - (ՀՄԳԳ. ՍՐԶ. ԱՇԽ. 3)
Նպատակ/Գիտակարգային առանցքային վերջնարդյունք. 3-րդ մակարդակ	
Ձևավորել հաշվողական համակարգերի դերի, նշանակության և կիրառման վերաբերյալ գիտելիքներ:	
Վերջնարդյունքներ	
<p>Թեմայի ուսումնառության արդյունքում սովորողը կկարողանա.</p> <ul style="list-style-type: none"> - Թվարկել հաշվողական համակարգերի օրինակներ և դրանց նշանակությունը: - Օրինակներով բացատրել, թե տարբեր ոլորտներում ինչպես է օգտագործվում տեխնոլոգիան: -Նկարագրել հաշվողական սարքերի զարգացման ընթացքը: 	
Բովանդակություն	
<p>Հաշվողական համակարգերի տեսակները: Համակարգիչներն առօրյա կյանքում: Հաշվողական համակարգերի զարգացման պատմությունը:</p>	
Գործնական աշխատանքներ	Խաչվող հասկացություններ
<ul style="list-style-type: none"> - Կիրառել մաթեմատիկական և հաշվողական մտածողություն: - Ներգրավվել ապացույցից բխող փաստարկման/հիմնավորման գործընթացում: 	<p>Համակարգ և մոդել Կառուցվածք և գործառույթ</p>
<p>ՀՊԶ Կարողունակություններ</p> <p>Կ7 Կ5</p>	<p>ՀՊԶ Վերջնարդյունքներ</p> <p>Հ6 Հ12</p>
Միջառարկայական կապեր	
Բոլոր առարկաների ուսումնասիրության ընթացքում հաշվողական համակարգերը կարողանալ ներկայացնել տվյալ առարկայի ուսումնառության շրջանակում:	

Թեմա 6-8	Դասարան 6
Տվյալների փոխանակման ձևաչափերի ընդհանուր գաղափարներ	Կոդ - (ՀՄԳԿ. ՍՐՔ. ՑՆՑ. 2)
Նպատակ/Գիտակարգային առանցքային վերջնարդյունք. 3-րդ մակարդակ	
Ձևավորել պատկերացումներ արձանագրությունների դերի վերաբերյալ համացանցով և ցանցով տվյալներ փոխանցելիս:	
Վերջնարդյունքներ	
Թեմայի ուսումնառության արդյունքում սովորողը կկարողանա. - Սահմանել երկու վերջնական կետերի միջև տվյալների փոխանակման արձանագրություն:	
Բովանդակություն	
Տվյալների փոխանակման արձանագրությունների հիմունքները:	
Գործնական աշխատանքներ	Խաչվող հասկացություններ
<ul style="list-style-type: none"> - Մոդելներ մշակել և օգտագործել: - Տվյալներ վերլուծել և մեկնաբանել: - Կիրառել մաթեմատիկական և հաշվողական մտածողություն: 	Համակարգ և մոդել
ՀՊՉ Կարողունակություններ Կ7 Կ5	ՀՊՉ Վերջնարդյունքներ Հ6 Հ5 Հ14
Միջառարկայական կապեր	
Մաթեմատիկա <ul style="list-style-type: none"> - Կիրառել տվյալների ներկայացման տարբեր ձևեր: 	

Թեմա 6-9	Դասարան 6
Ֆունկցիաների կիրառությունն աղյուսակներում	Կող - (ՀՄԳԳ. ԱՄՏԾ. ՈՒՊ. 8)
Նպատակ/Գիտակարգային առանցքային վերջնարդյունք. 3-րդ մակարդակ	
Չարգացնել տվյալները թվային աղյուսակներում մշակելու և պատկերավոր ներկայացնելու հմտություններ:	
Վերջնարդյունքներ	
<p>Թեմայի ուսումնառության արդյունքում սովորողը կկարողանա.</p> <ul style="list-style-type: none"> - Օգտագործել ֆունկցիաները թվային աղյուսակներում: - Ձևավորել աղյուսակները: - Կազմել պարզ դիագրամներ: 	
Բովանդակություն	
<p>Ֆունկցիաները թվային աղյուսակներում: Աղյուսակի ձևավորում: Տվյալների ներկայացումը դիագրամների միջոցով:</p>	
Գործնական աշխատանքներ	Խաչվող հասկացություններ
<ul style="list-style-type: none"> - Մոդելներ մշակել և օգտագործել: - Կիրառել մաթեմատիկական և հաշվողական մտածողություն: - Բացատրություններ ձևակերպել և լուծումներ մշակել: - Տեղեկատվություն ստանալ, գնահատել և հաղորդել: 	<p>Օրինաչափություն Պատճառ և հետևանք Մասշտաբ, համամասնություն և քանակ</p>
<p>ՀՊԶ Կարողունակություններ</p> <p>Կ7 Կ5</p>	<p>ՀՊԶ Վերջնարդյունքներ</p> <p>Հ6 Հ14 Հ4 Հ29</p>
Միջառարկայական կապեր	
Բոլոր առարկաների ուսումնառության շրջանակում հավաքագրել տվյալները՝ դրանք ներկայացնելով աղյուսակներով:	

Մաթեմատիկա

Հաշվարկների համար կիրառել ֆունկցիաներ, կիրառել այդ տվյալների ներկայացման գրաֆիկական եղանակներ:

Թեմա 6-10	Դասարան 6
Առցանց աշխատանքային տարածքներ	Կոդ - (ՀՄԳԳ. ԱՄՏԾ. ԾՐԳ. 6)
Նպատակ/Գիտակարգային առանցքային վերջնարդյունք. 3-րդ մակարդակ	
Ձևավորել ամպային տիրույթում նոր աշխատանք ստեղծելու, խմբագրելու հմտություններ :	
Վերջնարդյունքներ	
<p>Թեմայի ուսումնառության արդյունքում սովորողը կկարողանա.</p> <ul style="list-style-type: none"> - Օգտագործել համընդհանուր աշխատանքային միջավայր՝ մշակվող նախատիպերը պահպանելու համար: - Ամպային տիրույթներում ստեղծել նոր աշխատանք, մշակել, խմբագրել դրանք : 	
Բովանդակություն	
Ընդհանրացված աշխատանքային տարածքներ: Տվյալների, ֆայլերի պահպանման ամպային տիրույթ:	
Գործնական աշխատանքներ	Խաչվող հասկացություններ
<ul style="list-style-type: none"> - Հետազոտություններ պլանավորել և իրականացնել: - Տեղեկատվություն ստանալ, գնահատել և հաղորդել: 	<ul style="list-style-type: none"> Համակարգ և մոդել Կառուցվածք և գործառույթ Անհատ և հարաբերություններ
ՀՊԶ Կարողունակություններ	ՀՊԶ Վերջնարդյունքներ
<ul style="list-style-type: none"> Կ5 Կ2 Կ7 	<ul style="list-style-type: none"> Հ14 Հ28 Հ7
Միջառարկայական կապեր	
Բոլոր առարկաների ուսումնառության շրջանակում օգտագործել համընդհանուր աշխատանքային միջավայր՝ թեմային համապատասխան որևէ աշխատանք ստեղծելու,	

մշակելու, խմբագրելու համար:

Թեմա 6-11	Դասարան 6
Բլոկ-սխեմաներ	Կողմ - (ՀՄԳԳ. ԱՄՏԾ. ԾՐԳ. 10)
Նպատակ/Գիտակարգային առանցքային վերջնարդյունք. 3-րդ մակարդակ	
Ձևավորել նախատիպեր ստեղծելու այնպիսի կարողություններ, որ հաշվարկային խնդիրներ լուծելու համար օգտագործվեն ալգորիթմներ:	
Վերջնարդյունքներ	
Թեմայի ուսումնասռության արդյունքում սովորողը կկարողանա. - Կազմել պարզ ալգորիթմների բլոկ-սխեմաներ (օրինակ՝ մեծագույն թվի հայտնաբերումը և այլն): - Իրագործել ալգորիթմները բլոկների վրա հիմնված ծրագրավորման լեզվում:	
Բովանդակություն	
Ալգորիթմների ներկայացման եղանակներ: Բլոկ-սխեմաների օգտագործում: Բլոկների վրա հիմնված ծրագրավորման լեզվի կիրառում:	
Գործնական աշխատանքներ	Խաչվող հասկացություններ
- Կիրառել մաթեմատիկական և հաշվողական մտածողություն: - Բացատրություններ ձևակերպել և լուծումներ մշակել:	Համակարգ և մոդել Կառուցվածք և գործառույթ Անհատական և մշակութային արժեհամակարգ
ՀՊՉ Կարողունակություններ	ՀՊՉ Վերջնարդյունքներ
Կ2 Կ7 Կ5	Հ6 Հ7 Հ14
Միջառարկայական կապեր	
Մաթեմատիկա	

- Կիրառել մաթեմատիկական և հաշվողական մտածողություն:

Թեմա 6-12	Դասարան 6
Ընդհանրացված ընթացակարգեր	Կող. - (ՀՄԳԳ. ԱՄՏԾ. ԾՐԳ. 11)
Նպատակ/Գիտակարգային առանցքային վերջնարդյունք. 3-րդ մակարդակ	
Չարգացնել թվային աշխատանքներ ստեղծելու հմտություններ՝ օգտագործելով համակարգչային ծրագրի ներսում ընթացակարգեր:	
Վերջնարդյունքներ	
<p>Թեմայի ուսումնառության արդյունքում սովորողը կկարողանա.</p> <ul style="list-style-type: none"> - Գտնել ալգորիթմի այն հատվածները, որոնք ունեն նման ֆունկցիոնալություն: - Ընդհանրացնել կրկնվող հատվածները, որպեսզի հնարավոր լինի դրանք բազմակի անգամ օգտագործել խնդրի լուծման ընթացքում. կիրառել բլոկների վրա հիմնված ծրագրավորման լեզու: 	
Բովանդակություն	
Ընդհանրական ընթացակարգեր: Ինչու են անհրաժեշտ ընթացակարգերը:	
Գործնական աշխատանքներ	Խաչվող հասկացություններ
<ul style="list-style-type: none"> - Հարցեր տալ և խնդիրներ սահմանել: - Մոդելներ մշակել և օգտագործել: - Կիրառել մաթեմատիկական և հաշվողական մտածողություն: - Բացատրություններ ձևակերպել և լուծումներ մշակել: 	<p>Պատճառ և հետևանք</p> <p>Կառուցվածք և գործառույթ</p>
<p>ՀՊՀ Կարողունակություններ</p> <p>Կ7 Կ2 Կ5</p>	<p>ՀՊՀ Վերջնարդյունքներ</p> <p>Հ6 Հ7 Հ14</p>
Միջառարկայական կապեր	

Մաթեմատիկա

- Կիրառել մաթեմատիկական և հաշվողական մտածողություն:

Թեմա 6-13	Դասարան 6
Տվյալների տեսակները և անունները	Կոդ - (ՀՄԳԳ. ԱՄՏԾ. ՄՍՍ. 1)
Նպատակ/Գիտակարգային առանցքային վերջնարդյունք. 3-րդ մակարդակ	
Ձևավորել փոփոխականներ ստեղծելու, դրանք կիրառելու, ինչպես նաև դրանց միջոցով գործողություններ կատարելու կարողություններ:	
Վերջնարդյունքներ	
<p>Թեմայի ուսումնառության արդյունքում սովորողը կկարողանա.</p> <ul style="list-style-type: none"> - Նկարագրել տվյալների պահպանման կառուցվածքը փոփոխականների միջոցով, - Նկարագրել, թե ինչպես են փոփոխականները պահպանվում հիշողության մեջ, - Կիրառել փոփոխականներ բլոկներով ծրագրավորման մեջ: 	
Բովանդակություն	
<p>Փոփոխականի հայտարարում: Փոփոխականի սկզբնական արժեքի վերագրում: Փոփոխականի կիրառում:</p>	
Գործնական աշխատանքներ	Խաչվող հասկացություններ
<ul style="list-style-type: none"> - Մոդելներ մշակել և օգտագործել: - Տվյալներ վերլուծել և մեկնաբանել: - Կիրառել մաթեմատիկական և հաշվողական մտածողություն: 	<p>Օրինաչափություն Պատճառ և հետևանք Համակարգ և մոդել</p>
ՀՊԶ Կարողունակություններ	ՀՊԶ Վերջնարդյունքներ
<p>Կ7 Կ2 Կ5</p>	<p>Հ4 Հ6 Հ8 Հ12</p>

Միջառարկայական կապեր

Մաթեմատիկա

- Կիրառել մաթեմատիկական և հաշվողական մտածողություն:

Ց-Դ ԴԱՍԱՐԱՆ

Թեմա 8-1	Դասարան 8
Էլեկտրոնային ապահովություն	Կող - (ՀՄԳԳ. ՀՄՀ. ԱՊ. 4)
Նպատակ/Գիտակարգային առանցքային վերջնարդյունք. 3-րդ մակարդակ	
Ձևավորել հմտություններ ճանաչելու տեխնոլոգիայի պատշաճ և ոչ ճիշտ օգտագործման եղանակները կամ դեպքերը, երբ կատարում ենք հրապարակումներ/գրառումներ սոցիալական մեդիայում, ուղարկում ենք Էլեկտրոնային նամակներ կամ տեքստեր:	
Վերջնարդյունքներ	
Թեմայի ուսումնառության արդյունքում սովորողը կկարողանա. <ul style="list-style-type: none">- Պահպանել գաղտնիությունը և տվյալները սոցիալական մեդիայում՝ ապահովելով անձնական տվյալների պաշտպանությունը:- Պատշաճ հաղորդակցվել Էլեկտրոնային փոստի և հաղորդագրությունների ծրագրերով:	
Բովանդակություն	
Էլեկտրոնային ապահովություն: <ul style="list-style-type: none">- Էլեկտրոնային նամակ. ճիշտ գրելու ձևերը:- Անձնական տվյալների պաշտպանություն:- Էլեկտրոնային հաղորդակցության հիմնական տեխնիկական և էթիկայի նորմերը:	
Գործնական աշխատանքներ	Խաչվող հասկացություններ
<ul style="list-style-type: none">- Հարցեր տալ և խնդիրներ սահմանել:- Ներգրավվել ապացույցից բխող փաստարկման/հիմնավորման գործընթացում:- Տեղեկատվություն ստանալ, գնահատել և հաղորդել:	<ul style="list-style-type: none">Պատճառ և հետևանք, մեխանիզմ և կանխատեսումԱնհատ և հարաբերություններԳիտատեխնիկական նորարարություն

ՀՊԶ Կարողունակություններ Կ3 Կ5	ՀՊԶ Վերջնարդյունքներ Յ13
---	------------------------------------

Միջառարկայական կապեր

Բոլոր առարկաների ուսումնասիրության ընթացքում պահպանել էլեկտրոնային ապահովությունը՝ անձնական տեղեկատվությունը պահել գաղտնի և չտարածել:

Հայոց լեզու

-Կարողանալ հաղորդակցվել մարդկանց հետ հայերեն գրագետ խոսքով:

Հասարակագիտություն

-Ներկայացնել «Անձնական տվյալների պաշտպանության մասին» օրենքը:

Թեմա 8-2	Դասարան 8
Ապատեղեկատվություն. ինչպե՞ս և ինչու՞	Կոդ - (ՀՄԳ. ՀՄՀ. ԱԶԴ. 5)

Նպատակ/Գիտակարգային առանցքային վերջնարդյունք. 3-րդ մակարդակ

Ձևավորել հմտություններ տարբերակելու ապատեղեկատվությունը ճշգրիտ տեղեկատվությունից, հասկանալու մեդիայի և տեխնոլոգիայի օգտագործման դերը տեղեկատվությունը խեղաթյուրելու, չափազանցացնելու և թյուր ներկայացնելու համար:

Վերջնարդյունքներ

Թեմայի ուսումնասիրության արդյունքում սովորողը կկարողանա.

- Բացատրել առաջնային և երկրորդային աղբյուրների հավաքած տվյալների առավելություններն ու թերությունները:

- Բացատրել, թե ինչպես կարող են տեղեկատվության ճշգրտությունը, տեղին լինելը, հնությունը, մանրամասնության աստիճանը և լիարժեքությունն ազդել դրա որակի վրա:

- Ներկայացնել, թե ինչպես կարող է մեդիան և տեխնոլոգիան օգտագործվել տեղեկատվությունը խեղաթյուրելու, չափազանցացնելու և թյուր ներկայացնելու համար:

Բովանդակություն

Տվյալներ, տեղեկատվություն, գիտելիք.

-Առաջնային և երկրորդային աղբյուրներ,

- Տեղեկատվության ճշգրտությունը, տեղին լինելը, հնությունը, մանրամասնության աստիճանը և լիարժեքությունը,
- Ապատեղեկատվություն:

Գործնական աշխատանքներ	Խաչվող հասկացություններ
<ul style="list-style-type: none"> - Բացատրություններ ձևակերպել և լուծումներ մշակել: - Ներգրավվել ապացույցից բխող փաստարկման/հիմնավորման գործընթացում: 	<ul style="list-style-type: none"> Պատճառ և հետևանք Անհատ և հարաբերություններ Չարգացում
<p>ՀՊԶ Կարողունակություններ</p> <p>Կ4 Կ5 Կ30 Կ29 Կ25</p>	<p>ՀՊԶ Վերջնարդյունքներ</p> <p>Հ40 Հ18</p>
Միջառարկայական կապեր	
<p>Բոլոր առարկաների ուսումնասիրության ընթացքում ուսումնական նյութեր որոնելու նպատակով քննադատորեն վերլուծել և ստուգել տեղեկատվությունը, տարբերել հավաստի և կեղծ տեղեկատվությունը:</p>	

Թեմա 8-3	Դասարան 8
Մուլտիմեդիա և աղյուսակներ. ստեղծում ենք Նոր աշխատանքներ	Կող. - (ՀՄԳԳ. ԹԳԾ. ՕԳՏ. 1)
Նպատակ/Գիտակարգային առանցքային վերջնարդյունք. 3-րդ մակարդակ	
Չարգացնել թվային աշխատանքներ ստեղծելու և բարելավելու հմտություններ:	
Վերջնարդյունքներ	
